ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍԱՄԲ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 21 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Ռոբերտ Նորիկի Մեղերդիչ-Ղարասսեմյանի դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Ռոբերտ Մեղերդիչ-Ղարասսեմյանը 11.01.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի, 28-րդ հոդվածի չորրորդ մասի եւ 45-րդ հոդվածի առաջին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ այն մասնակի՝ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 221-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով եւ 28-րդ հոդվածի չորրորդ մասով համապատասխանում է

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28-րդ հոդվածների պահանջներին, պահպանվել է սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով սահմանված ժամկետը, իսկ դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Հարկ է մատնանշել, որ գործի քննությունը ՀՀ քաղ. դատ. օր.-ի 45-րդ հոդվածի առաջին մասով ենթակա է մերժման, քանի որ սույն իրավանորմը դիմողի սկզբմամբ որեւէ դատական ակտով չի կիրառվել եւ, հետեւաբար, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի՝ նշված դրույթի մասով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 2-րդ կետով, 69-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. Ռոբերտ Մեղերդիչ-Ղարասսեմյանի դիմումով գործը՝ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 221-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով եւ 28-րդ հոդվածի 4-րդ մասով ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային Ժողովին:

3. Սույն դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 45-րդ հոդվածի 1-ին մասի մասով մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

21 հունվարի 2010 թվականի
ՍԴԿՈ/2-1